

**Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում նոր ընդգրկված 320  
դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները  
սպասարկող մասնագետների վերապատրաստման դասընթացի  
ծրագիր**

	Թեմա	Ժամ
1	Ընդհանուր գաղափար համակարգչի սարքային ապահովման մասին (Hardware): Համակարգչի բաղկացուցիչ մասեր:	1
2	Գաղափար ծրագրային ապահովման մասին (Software): Օպերացիոն համակարգեր, ծառայողական և կիրառական ծրագրեր: Օպերացիոն համակարգերի տեսակները (DOS, Windows, UNIX):	2
3	Windows XP/VISTA օպերացիոն համակարգի առանձնահատկությունները, համեմատություն այլ օպերացիոն համակարգերի հետ, հիմնական տարբերությունները և համեմատականները:  Գաղափար համակարգչային սարքերի վարող ծրագրերի մասին (driver):	2
4	Ֆայլեր և պանակներ  Ֆայլի սահմանում: Ֆայլերի տիպերը, անունները, ընդլայնումները և ասոցիացիաները կիրառական ծրագրերի հետ:	2
5	<u>Գործնական աշխատանք:</u> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանք ֆայլերի և պանակների հետ (ստեղծում, տեղափոխում, կրկնօրինակում, ջնջում):</li> <li>• Աշխատանք My Computer ծրագրի Tools ցանկի հետ: Ռեժիմների փոփոխություն:</li> <li>• Desktop Properties, Regional and Language Settings երկխոսական պատուհանների ուսումնասիրություն, փոփոխությունների կատարում, համապատասխան կարգավորումների իրականացում:</li> <li>• Shortcut-ներ: DeskTop, Start menu, որևէ այլ պանակում Shortcut-երի ստեղծում և օգտագործում:</li> <li>• Համակարգչի ֆորմատավորում, Windows XP/VISTA օպերացիոն համակարգի և սարքավորումների վարող ծրագրերի տեղադրում:</li> <li>• Հայերեն և ռուսերեն Unicode ու ASCII տառատեսակներ: ArmNLS և KDWin ծրագրեր: Տառատեսակների և ծրագրերի տեղադրում, օգտագործում:</li> </ul>	6
6	Գաղափար համակարգչային ցանցերի մասին: Համառոտ պատմություն, ցանցերի անհրաժեշտությունը և կարևորությունը ուսումնական գործընթացի	4

	<p>արդյունավետ կազմակերպման գործում: Լոկալ և գլոբալ ցանցեր, դրանց տեսակները և համեմատությունները:</p> <p>Ethernet տեսակի լոկալ ցանցի կառուցվածքը, անհրաժեշտ սարքավորումներ (ցանցային քարտեր, HUB-եր, Swich-ներ) և գործող արձանագրություններ:</p> <p>Գաղափար TCP/IP արձանագրության մասին: Համառոտ պատմություն, կառուցվածք, տեղադրման ձևեր, կարգավորումներ: Գաղափար TCP/IP v6-ի մասին:</p>	
7	<p><u>Գործնական աշխատանք:</u></p> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանք My Network Places ծրագրով, TCP/IP արձանագրության տեղադրում, ֆայլերի, պանակների և տպիչների համօգտագործում (sharing), օգտագործողների մուտքի (access) սահմանափակումներ:</li> </ul>	4
8	<p>Internet-Գլոբալ համակարգչային ցանց:</p> <p>Ընդհանուր տեղեկություններ Internet-ի ծագման և զարգացման մասին:</p> <p>Ընդհանուր տեղեկություններ գլոբալ ցանցերի սարքային ապահովման մասին:</p> <p>Երթուղիչներ (Router): Դրանց աշխատանքի սկզբունքը:</p> <p>Տեղեկություններ ինտերնետ արձանագրությունների և դրանց վրա հիմնված ինտերնետային արձանագրությունների մասին ( HTTP, FTP, TELNET, SMTP, POP3, IMAP, HTTPS, SSL):</p> <p>Համաշխարհային ուստայն (WWW): Վեբ սերվերներ, ինֆորմացիայի ստացում սերվերներից:</p> <p>Բրոուզերներ: Աշխատանք դրանց հետ, ընդհանրություններ և տարբերություններ (առնվազն երկու բրոուզերի ուսումնասիրում):</p> <p>Աշխատանք Internet Explorer-ի Tools→Internet Options ներդիրների հետ:</p> <p>Գաղափար FTP արձանագրության մասին:</p> <p>Էլեկտրոնային փոստ: Հիմնական գաղափարներ, փոստային սերվերներ, ֆունկցիաներ:</p> <p>Գաղափար էլեկտրոնային փոստ հասցեի և դրա կառուցվածքի մասին:</p> <p>Mail Clients (Outlook Express)-ի կարգավորումները, pop3/smtp սերվերների աշխատանքի սկզբունքները:</p> <p>Web տեխնոլոգիաների վրա հիմնված էլեկտրոնային փոստ (hotmail, yahoo, gmail, freenet, hord):</p>	6
9	<p><u>Գործնական աշխատանք:</u></p> <ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրոնային փոստի նոր հասցեի և օգտագործողի ստեղծում, տեղադրում MS Outlook համակարգում:</li> <li>• Նոր հաշվի գրանցում (Account), նոր նամակի ստեղծում (CC, BCC), անրակցում (attach), նկարի ներմուծում, տեքստային տարբեր ձևերի</li> </ul>	3

	<p>օգտագործում (rich and plain text format):</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նամակների ստացում (Receiving mail), պատասխան (reply, reply all), փոխանցում (forward), լրկալ պանակներ, դրանց ստեղծում և կառավարում, կարգավորումներ (Options), կոնտակտներ և խմբեր (Contacts and groups), հաղորդագրությունների կանոններ (Message rules):</li> </ul>	
10	<p>Հակավիրուսային և արխիվացնող ծրագրեր:  Համակարգչային վիրուսներ և դրանց վնասագերծում: Հակավիրուսային ծրագրի տեղադրում և թարմացում (Norton Antivirus):  Տեղեկություն ֆայլերի արխիվացման մասին: Աշխատանք Windows Backup, WinZip և WinRar ծրագրերով:</p>	2
11	<p>Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանց (ՀԴԻՑ):  ՀԴԻՑ-ի կառուցվածքը:  Տեղեկություն յուրաքանչյուր դպրոցի կապի տեսակի մասին:  Ping, Tracert հրամաններ, դրանց կիրառման անրաժեշտություն, առաջացած խնդիրների բացահայտման և մասնավորեցման մեթոդներ:  TCP/IP settings կարգավորումների ձևերը դպրոցների համար:  ՀԴԻՑ-ի ընդհանուր ռեսուրսների ներկայացում (<a href="http://www.armedu.am">www.armedu.am</a>, <a href="mailto:mail.schools.am">mail.schools.am</a>, <a href="ftp.schools.am">ftp.schools.am</a>):  ՀԴԻՑ-ի էլեկտրոնային փոստի խմբերը, աշխատանք դրանց հետ:</p>	4
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>		<b>36</b>

*Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում նոր ընդգրկված 320 դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների (նրանց բացակայության դեպքում՝ համապատասխան ուսուցիչների) համար համակարգչային կենտրոնների և ներքին ցանցերի սպասարկման հարցերն ամփոփող դասընթացին ընդգրկվում են 320 մասնագետներ, յուրաքանչյուր վերոհիշյալ դպրոցից՝ մեկական:*